

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒՉԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ՉԱՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)
Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեն ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Զամբուրգ, Գերմանիա**)
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎԱՆԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ղոնի Ռոստով, ՌԴ**)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)

Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor

Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor

Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (**Geneva, Switzerland**)

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Авetik АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արմեն Մարուքյան. Սևրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաբանական հիմքերից մեկը.....9

Armen Marukyan. Treaty of Sevres as One of the Legal-Political Basis of Reparations

Армен Марукян. Севрский договор как одна из правовых и политических основ репараций

Սարգիս Բաղդարյան. Միջերկրածովյան առևտուրն ու Հայրապետ Դի Մարտինի նամակները (նախնական դիտարկումներ)25

Sargis Baldaryan. Mediterranean Trade and Hierapet Di Martin’s Letters (Preliminary Remarks)

Саркис Балдарян. Торговля Средиземноморья и письма Айрапета Ди Мартина (предварительные замечания)

Անի Խաչատրյան. Թեթեյան մշակութային միության ԱՄՆ-ի և Կանադայի մասնաճյուղերի գործունեությունը 1980-ական թվականներին.....32

Ani Khachatryan. Activities of Branches of the Tekeyan Cultural Association in the United States and Canada in the 1980s.

Ани Хачатрян. Деятельность филиалов Культурной Ассоциации Текеян в США и в Канаде в 1980-х гг.

Միքայել Մալխասյան. Մեծ Հայքի թագավորության՝ Մոսքիկյան լեռներով ձգվող հյուսիսարևմտյան սահմանագծի խնդիրը (ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»).....40

Mikayel Malkhasyan. The Problem of the North-Western Borderline of Greater Armenia along Moschikian Mountains (According to Claudius Ptolemy’s “Geography”)

Микаэл Малхасян. Проблема северо-западной пограничной линии Великой Армении вдоль Мосхикских Гор (по «Географии» Клавдия Птолемея)

Վահե Սարգսյան. Չավախքի հիմնահարցը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի) (Մաս 1).....54

Vahe Sarkisyan. The Main Issue of Javakhk according to the Perceptions of Georgian Socio-Political Thought (Based on Georgian Print Media in 1999-2009) (Part 1)

Ваз Саркисян. Проблема Джавахка в оценке грузинской общественно-политической мысли (по материалам грузинских печатных изданий 1999-2009 гг.) (Часть 1)

Արեգ Զոչինյան. Տերմինուս ընտրախավերի տեսությունը ամերիկյան անցումային պատմակարգի համատեքստում.....70

Areg Kochinyan. Terminus Elite Theory in the Context of American Transition Formation

Арег Кочинян. Теория элит Терминус в контексте американской переходной формации

**ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Մագդա Արսենյան. ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության պայմաններում.....82

Magda Arsenyan. The Issues of Democratization of Parliamentary Culture of the Republic of Armenia in the Context of Neopolitics

Магда Арсенян. Проблемы демократизации парламентской культуры в контексте неополитики в РА

**ՋԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԶԱՐՑԸ ԿՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՍԲ (ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ԿՐԱՑԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ
ՄԱՍՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ)*
(ՄԱՍ 1)**

ՎԱՐՅԵ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի սփյուռքի և
հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vsaragsyan83@gmail.com*

Հոդվածի նպատակն է շուրջ մեկ տասնամյա ժամանակահատվածի (1999-2009թթ.) վրաց տպագիր մամուլի նյութերի միջոցով ներկայացնել Ջավախքի հիմնահարցը՝ վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ: Հոդվածի առաջին մասի խնդիրն է համակարգված կերպով, մատնանշել ներքին ու արտաքին բոլոր այն գործոնները, որոնք ազդել են Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա:

Հետազոտության տեքստը շարադրվել է 1999-2009թթ.-ին վրացական տպագիր մամուլում հրատարակված, ինչպես նաև թեմային առնչվող այլևայլ նյութերի և՛ առանձնաբար, և՛ համադրմամբ ուսումնասիրելու հենքի վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա խորը և հիմնական ազդեցություն են գործել մի խումբ ներքին ու արտաքին գործոններ: Նշյալ գործոններով ձևավորված ընկալումներն ու կարծրատիպերը մեծապես պայմանավորում են այն քաղաքական ուղեգիծը, որը վարել ու վարում են վրացական իշխանությունները ջավախահայրության հանդեպ:

Հիմնաբառեր՝ Ջավախք, վրաց հասարակական-քաղաքական միտք, վրաց տպագիր մամուլ, վրացական միջավայր, ընկալումներ, ներքին ու արտաքին գործոններ, քաղաքական ուղեգիծ, միջպետական հարաբերություններ:

Վրաստանի պետական քաղաքականությունը երկրի հարավում ձևավորված Սամցխե-Ջավախք նահանգի և Զվեմո Քարթլի նահանգի՝ Սամցխե-Ջավախքին սահմանակցող Ծալկայի շրջանի (այսուհետ՝ Սամցխե-Ջավախք-Ծալկա կամ Ջավախք) հայրության հանդեպ պայմանավորված է ներքին (ժողովրդագրական, հոգեբանական) և արտաքին գործոններով: Ըստ այդմ, 2014թ.-ի պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 88.500(49,3 %) ¹⁸⁴, իսկ փաստացի, տարբեր հաշվարկներով 120-150 հազար հայ ազգաբնակչությամբ Սամցխե-Ջավախք-Ծալկա (Ջավախք) երկրամասի հիմնահարցի վրաց հասարակական-քաղաքական շրջանակների ընկալումները լավագույնս ըմբռնելու համար հարկ է որոշակի խմբավորման միջոցով անդրադառնալ վերոհիշյալ գործոններին: Դժվար է ասելը, թե դրանցից որն ինչ չափով է ազդել և

* Հոդվածը ներկայացվել է 08.07.2020թ., գրախոսվել՝ 13.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

¹⁸⁴ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ընդհանուր բնակչության թիվը 2014 թ.-ին Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով կազմել է 179.353, որից 86.300-ը՝ վրացիներ (48,1 %), 88.500-ը՝ հայ (49,3 %), 1,300-ը՝ ադրբեջանցի (0,7 %), 3,100-ը՝ այլ (1,7 %):

շարունակում է ներգործել այդ ընկալումների վրա, միաժամանակ պետք է փաստել, որ տարբեր ժամանակաշրջաններում դրաց ազդեցության չափաբաժինը ենթարկվել է փոփոխման:

Չավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող **ներքին գործոններն** են.

- *Վրացական միջավայրում հայության հանդեպ ձևավորված «ավանդական», գերակշիռ մասով՝ բացասական վերաբերմունքը:* Այստեղ Չավախքն ու ջավախահայությունը լիարժեքորեն դիտարկվում են որպես հայկական միջավայր՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

- *Վրաստանի բավերթնիկ լինելու իրողությունը և, հակառակ դրան, տվյալ երկրում մշտապես կիրառվող մոնոթեոկրատիայի (միաթեոկրատիկ ձևավորման) քաղաքականության առկայությունը:* Խոշոր հաշվով **աբխազական և օսական հակամարտությունների** հիմքերում հենց այս քաղաքականությունն էր, որը, ի վերջո, հանգեցրեց այդ երկրամասերի՝ Վրաստանից փաստացի անջատմանը և, 2008թ.-ից սկսած, անկախության ճանաչման գործընթացի սկզբնավորմանը¹⁸⁵: Սույն կետի տակ հարկ է հիշատակել նաև **Վրաստանի փաստացի տարածքում էթնոժողովրդագրական հողի վրա տեղի ունեցող հետևյալ գործընթացները**¹⁸⁶.

ա) Ադրբեջանական գործոնը կամ Վրաստանի հարավային ու հոծ ադրբեջանաբնակ Զվեմո Զարթի նահանգում ապրող շուրջ 180 հազար ադրբեջանցիների¹⁸⁷ խնդիրները: Դրանք իրենց սուր բնույթով հանդիսացել են մշտական օրակարգային հարց, և նահանգի մեջ մտնող նախկին խորհրդային 4 շրջանների՝ Դմանխի, Բուխխի, Մառնեուլի և Գարդաբանի հանդեպ ադրբեջանական պատմական նկրտումների, այնտեղ գործող կազմակերպությունների, տեղի ունեցող խմորումների ու պահանջների վերաբերյալ վրացական մամուլը բավիցս է անդրադարձել: Փաստվել է, որ այնտեղ պարբերաբար ի հայտ եկող թերթերը¹⁸⁸, կազմակերպությունները¹⁸⁹ և գործիչներն այդ տարածքը կոչում են «Բորչալու»՝ պահանջելով ազգային-լեզվական արտոնություններ, մշակութային, վարչական լայն ինքնավարություն, առանձին դեպքերում՝ ընդհուպ մինչև անկախություն կամ միացում Ադրբեջանին և այլն¹⁹⁰:

¹⁸⁵ **Սարգսյան Վ.**, Հարավօսական հիմնահարցի մասին, «21-րդ ԴԱՐ», N 4, 2018, էջ 27-39:

¹⁸⁶ Էթնոժողովրդագրական փոփոխություններն Անդրկովկասում. Վրաստան, 08.05.2017թ. (<http://armenian-community.ge/News/2444>):

¹⁸⁷ 2014թ.-ին Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում շուրջ 230 հազար ադրբեջանցի է ապրում: Նրանց ճնշող մեծամասնությունը՝ 180 հազարը, բնակվում է հարավային Զվեմո Զարթի նահանգում:

¹⁸⁸ 1996 թվականից թիֆլիսում խորհրդային շրջանում Բաբվից Թիֆլիս տեղափոխված ուն Ազիմ Իսմայիլբեյլու կողմից հիմնադրվել ու հրատարակվել է «Մուլա Նարեդին» ամսագիրը, որում խիստ քննադատության էր ենթարկվում Վրաստանի իշխանությունների՝ ադրբեջանցիների հանդեպ վարած քաղաքականությունը «Բորչալուում»: Ժողովածուում տպագրվել են նաև պատմական ակնարկներ, որոնցում խոսվել է Դմանխի, Բուխխի, Մառնեուլի և Գարդաբանի՝ հիմնականում ադրբեջանաբնակ շրջաններին ինքնավարություն շնորհելու անհրաժեշտության, «պատմական ադրբեջանական» տեղանունների վերականգնման (Դմանխը՝ Բաշքեչիդ, Գարդաբանը՝ Ղարայազ և այլն) մասին («**ՅՅՈՒՆ ԶՅՈՒՆՆԵՐ**» («Կվիռի պալիտոնա» («Շաբաթվա ներկայանակը»)), N 22, 2001): Այս և հետագա հղումներում վրացալեզու թերթերի անունները բերված են վրացերենով, իսկ փակագծերում՝ հայատառ ու թարգմանաբար:

¹⁸⁹ Զվեմո Զարթի նահանգում հետխորհրդային շրջանում ձևավորված ադրբեջանական հասարակական-քաղաքական կազմակերպությունների և վերջիններիս ղեկավար գործիչների մասին առավել հանգամանալից տե՛ս **Սարգսյան Վ.**, Հյուսիսային լուրի, Հայոց հյուսիսային դարբասները. Չավախք, Լոռի, Երևան, 2009, էջ 56-71:

¹⁹⁰ «**ՅՅՈՒՆ ԶՅՈՒՆՆԵՐ**» («Կվիռի պալիտոնա» («Շաբաթվա ներկայանակը»)), N 46, 2005.

բ) Մեգրելա-սվանական գործոնը կամ Վրաստանի հյուսիս-արևմտյան երկու՝ Սամեգրելո-Չեմո Սվանեթի ու Ռաճա-Լեճիուլի և Զվեմո Սվանեթի նահանգներում ապրող մեգրելների¹⁹¹ ու սվանների¹⁹² ազգային-լեզվական խնդիրները: Յետխորհրդային վրացալեզու մամուլը բազմիցս է անդրադարձել քարթվելական մակրոէթնոսի մեջ մտնող, մինչ 1930-ական թթ. պաշտոնական փաստաթղթերում առանձին ժողովուրդ նշվող, իսկ դրանից հետո վրացիների կազմում ընդգրկված մեգրելների ու սվանների շրջանում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների, առանձին գործիչների գործունեությանը և վերջիններիս կողմից առաջ քաշված բազմապիսի պահանջներին: Վրացական աշխարհիկ ու հոգևոր շրջանակները ցավագին ձևով են արձագանքել, օրինակ, 1990-ական թթ.-ի վերջին և 2000-ական թթ.-ի սկզբին Մեգրելիայում (վրաց.՝ Սամեգրելո) գործող հասարակական քաղաքական կազմակերպությունների համակարգող խորհրդի կողմից առաջ քաշված պահանջներին, այն է՝ ինքնավարություն տրամադրել Մեգրելիային, ինչպես նաև տարրական դասարաններում թույլատրել մեգրելերենի ուսուցումը¹⁹³: Մեգրելների շրջանում գործող «Այա» կազմակերպության ղեկավար Էդեմ Իգորիան փաստել է, որ անհրաժեշտ է մեգրելերենն ուսուցանել դպրոցներում: Ըստ Իգորիայի՝ անհրաժեշտ է մեգրելերեն ու Մեգրելիան մտցնել Կարմիր գրքում, մեգրելերենով հրատարակել մամուլ, երկրամասը (Մեգրելիան) հայտարարել երկլեզվյա տարածաշրջան՝ մեգրելերենին տալով տարածաշրջանային լեզվի կարգավիճակ¹⁹⁴: Վրացական մամուլում հերթական հուժկու ալիքը բարձրացավ 2000-ական թթ.-ի կեսերին, երբ Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան, ազգությամբ սվան Սոզար Սուբարը նախաձեռնեց Աստվածաշնչի՝ մեգրելերենով և սվաներենով թարգմանության գործընթացը: Վերջինս իրավամբ այդ լեզուները համարել է Վրաստանի հարստությունը և, որպես երկրի ժողովրդավարացման ուղղությամբ կարևորագույն քայլ, նախաձեռնել այդ լեզուների պահպանման, զարգացման և աշխարհին ներկայացման գործընթացը: Բարձրացված հուժկու ալիքին հակադարձելով՝ Ս. Սուբարը փաստել է, որ եթե մեկը ժողովրդավարական երկրում ձգտում է պաշտպանել իր մայրենին, ապա դա չի կարող դիտվել որպես անջատողականություն և, ճիշտ հակառակը, ինչպես նշել է Վրաստանի այդ շրջանի ՄԻՊ-ը, մեգրելերենով և սվաներենով ինչ-որ բան թարգմանելու արգելքները կարող են դիտվել որպես ֆաշիզմի դրսևորումներ¹⁹⁵: Այս փուլում ևս ակտիվացան քննարկումները կամ, ավելի ճիշտ կլինի ասել, կարծիքների բախումն առ այն, թե մեգրելերենը և սվաներենն առանձին լեզուներ են, թե՞ բարբառներ: Բնականաբար, Ս. Սուբարը և Նրա կողմակիցները դրանք համարում էին առանձին լեզուներ, իսկ վրացական շրջանակները՝ բարբառներ¹⁹⁶: Այս ամենը վրաց

¹⁹¹ Մեգրելները հիմնականում ապրում են Վրաստանի Սամեգրելո-Չեմո Սվանեթի նահանգում և վերջինիս սահմանակցող Աբխազիայի Գալիի և Տոլվարչեյի շրջաններում:

¹⁹² Սվանները հիմնականում ապրում են Մեծ Կովկասի հարավային փեշերին ընկած պատմական Սվանեթիայի մարզում, որը 1990-ական թթ.-ին բաժանվել է Վրաստանի երկու նահանգների միջև. սվանաբնակ Մեստիայի շրջանը ներառվել է Սամեգրելո-Չեմո Սվանեթի, իսկ Լեւտեխի շրջանը՝ Ռաճա-Լեճիուլի և Զվեմո Սվանեթի նահանգի կազմում: Թվով մոտ 2 հազար սվաններ ապրում էին նաև Մեստիայի շրջանին (Սամեգրելո-Չեմո Սվանեթի նահանգ) սահմանակցող Աբխազիայի Գուրիպշի շրջանի մեջ մտնող Կոդորի կիրճում (Աբխազական Սվանեթ): 2008թ. վրաց-օսական պատերազմի օրերին Կոդորի կիրճն ամբողջությամբ Աբխազիայի վերահսկողության տակ անցնելուց հետո սվանները լքեցին այդ տարածքը:

¹⁹³ “Տյ Նոնանո” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»), N 150, 2001.

¹⁹⁴ “Տյ Նոնանո” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»), N 150, 2001.

¹⁹⁵ “Տյ Նոնանո” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»), N 201, 2005.

¹⁹⁶ “ՋոթՋոնան տանոն” («Չորջիան թայմս»), N 31, 2005.

հասարակական-քաղաքական, աշխարհիկ ու կրոնական¹⁹⁷ շրջանակներում որակվեցին որպես «անջատողականությունը», «վրացական միջավայրում նոր ժողովուրդների և լեզուների ձևավորմանը», «Վրաստանի միասնականության թուլացմանը», «ռուսական կայսերական քաղաքականության շահերին ծառայելուն», «Վրաստանը քայքայելուն» ուղղված խիստ վտանգավոր գործընթացներ¹⁹⁸: Այս խնդրի շուրջ հետաքրքրական լուծում էին առաջարկում վրաց գիտական-ակադեմիական շրջանակները՝ կողմ լինելով մեզրելերենի ու սվաներենի գոյությանն ու զարգացմանը և հայտարարելով, որ վրացերենը, մեզրելերենը և սվաներենն ունեն միևնույն հիմքերը: Ըստ Վրաստանի գիտությունների ակադեմիային առընթեր «Շումերի» գիտահետազոտական կենտրոնի հիմնադիրներ, ակադեմիկոսներ Անդրիա Ավաքիձեի, Գիորգի Ցիցիշվիլու և մյուսների՝ վերոհիշյալ երեք լեզուների հիմքում ընկած է շումերերենը և, հանձնիս այդ լեզուների, շումերերենն այսօր էլ շարունակում է իր գոյությունը¹⁹⁹: Այս պնդման հենքի վրա գիտնականները, նրանց շարքում նաև «Շումերի» կենտրոնի նախագահ Չուրաբ Զափիանիձե, հայտարարում էին, որ վրացերեն-մեզրելերեն-սվաներեն լեզուները աշխարհի բոլոր լեզուների և մշակույթների հիմքը հանդիսացող շումերականի հոգեզավակներն են, հետևաբար մեզրելական ու սվանական լեզուներով պետք է թարգմանվի ամեն ինչ, որպեսզի պահպանվի այդ հնագույն լեզուն²⁰⁰:

Չավախբի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող **արտաքին գործոններն** են.

- *Թուրք-ադրբեջանական գործոնը*: Զննարկման թեմայից դուրս համարելով Թուրքիայի ու Ադրբեջանի տնտեսական, էներգետիկ, տարանցիկ, ռազմաքաղաքական ու ժողովրդագրական ազդեցությունները Վրաստանի վրա՝ փաստենք, որ խնդրո առարկա շրջանի վրացական մամուլը բազմիցս անդրադարձել է թուրք-ադրբեջանական նվաճողական քաղաքականությանը Վրաստանում: Վրաստանի լեյբորիստական կուսակցության առաջնորդ Շավվա Նաթելաշվիլին, օրինակ, 2006թ.-ին խստորեն քննադատել է նախագահ Մ. Սահակաշվիլուն՝ Բաթումի օդակայանը թուրքական ընկերությանը²⁰¹ փոխանցելու պատճառով: Ընդդիմադիր գործիչը նախագահի այդ քայլը համարեց անգամ «ղավաճանություն», «վրացական տարածքների օտարում Թուրքիային», ինչի հետևանքով Վրաստանը հետզհետե վերածվում է թուրքական վիլայեթի²⁰²: Շ. Նաթելաշվիլին նույնկերպ դեմ է արտահայտվել նույն շրջանում նաև

¹⁹⁷ Վրաց Ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդը այդ առիթով հայտարարեց, որ Աստվածաշունչը մեզրելերեն ու սվաներեն թարգմանելու փորձերը Ռուսաստանի կայսրության կողմից 19-րդ դարի վերջերին սադրած ուխտադրուժ գաղափար է: Ըստ Սինոդի հայտարարության՝ 1790թ.-ին թագավորի կողմից ստորագրված «Իվերցիների միասնականության տրակտատում» գրված է, որ Զարթիում, Կախեթում, Իմերեթում, Օդիշում և Գուրիայում ապրող յուրաքանչյուր իվերցիներ հավատակից են, մի լեզվի ու եկեղեցու զավակներ: Սինոդը անթույլատրելի է համարել Աստվածաշնչի թարգմանությունը մեզրելերենով և սվաներենով, ինչը, ըստ ՎՈւԵ-ի, **առաջին հերթին նպատակ ունի անջատել (տե՛ս պառակտել) ազգը և երկրի տարածքային ամբողջականությունը խախտելու փորձ է (rac, upirvels, yovlisa, miznad isaxavs eris gaTiSva da qveynis mTlianobis daryvevis mcdelobas), տե՛ս “axali Taoba” («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 1, 2006.)**

¹⁹⁸ **“rezonansi”** («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 208, 2005.

¹⁹⁹ **“jorjian Taimsi”**(«Ջորջիան թայմս»), N 37, 2005.

²⁰⁰ **“jorjian Taimsi”**(«Ջորջիան թայմս»), N 37, 2005.

²⁰¹ Թուրքական «TAV Airports Holding» ընկերության կողմից գնվելուց և վերագինումից հետո Բաթումի միջազգային օդակայանը վերաբացվեց 2007թ.-ի մայիսի 26-ին՝ Վրաստանի անկախության օրը:

²⁰² **“axali Taoba”** («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 78, 2006.

Թիֆլիսի միջազգային օդակայանը²⁰³ թուրքական ընկերությանը (Նաթելաշվիլու բնորոշմամբ՝ Թուրքիային) փոխանցելուն՝ փաստելով, որ երկրի ռազմավարական երկու գլխավոր դարպասներն այդպիսով հայտնվել են Թուրքիայի վերահսկողության տակ²⁰⁴: Կրացական մամուլում (հիմնականում ընդդիմադիր) 2006 թ.-ի հունիսին հրապարակված ծավալուն հոդվածում քննարկելով թուրք-վարացական հարաբերությունների և Կրաստանի՝ Թուրքիայի ազդեցության տակ հայտնվելու վտանգները՝ հոդվածագիրն անդրադառնում է նաև Բաթումի օդակայանը Թուրքիային փոխանցելու ցավալի խնդրին և այդ համատեքստում կրկին քննադատում Կրաստանի իշխանություններին՝ երկրի ազգային շահերը ոտնահարելու համար²⁰⁵: Կրացական հասարակական-քաղաքական միտքը երբեմն դժգոհություններ է հայտնել նաև թուրք-ադրբեջանական տարանցիկ քաղաքականության²⁰⁶, ադրբեջանական տնտեսական էքսպանսիայի և Կրաստանի վրա դրա հետևանքների մասին:

Բնականաբար, Թուրքիայի ու Ադրբեջանի բազմաոլորտ ու խորը ազդեցությունը Կրաստանի վրա դուրս է գալիս զուտ տնտեսականի շրջանակներից՝ վերածվելով ժողովրդագրական, աշխարհաքաղաքական, քաղաքակրթական հզոր միջոցների, լծակներ, որոնց ազդեցությունները Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա չափազանց խորն են ու վտանգավոր: Վերջին շրջանում վրացական շահագրգիռ շրջանակներն անգամ անթաքույց հայտարարում են, որ իրենց խտրական քաղաքականությունը ջավախահայության և, ընդհանրապես, հայության ու Յայաստանի հանդեպ պայմանավորված է նաև թուրք-ադրբեջանական գործոնի թելադրանքով:

Այսպիսով՝ թուրք-ադրբեջանական աճող ներկայությունը Կրաստանում իր սուր ծայրով ուղղված է և՛ ՀՀ-ի, և՛ Կրաստանում (Ջավախքում) ապրող հայության դեմ:

- *Հարևանների հանդեպ հողային պահանջների և ինչպես այդպիսի տարածքների վրա, այնպես էլ արտերկրում երբեմն բնակված կամ այժմ ապրող քաղաքական ժողովուրդների խնդիրների շուրջ քննարկումները:* Կրացական գիտական-հանրային շրջանակներում այս խնդիրների քննարկումը, բնականաբար, այս կամ այն կերպ, ուղղակի և անուղղակի, իր ներգործությունն ունի Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա.

²⁰³ Թուրքական «TAV Airports Holding» ընկերության կողմից գնվելուց հետո Թիֆլիսի միջազգային օդակայանի ամբողջովին վերազինումն ավարտվել է 2007 թ.-ի փետրվարի 11-ին, շուրջ 10 տարի անց՝ 2017թ.-ի սեպտեմբերի 26-ին, Կրաստանի Կարչապետ Գ. Կվիրիկաշվիլու, «TAV Airports Holding» ընկերության նախագահ և գլխավոր տնօրեն Սանի Շեների և թուրք-վրացական բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ բացվում է Թիֆլիսի Շ.Ռուսթավելու անվան օդանավակայանի ժամանման նոր տերմինալը:

²⁰⁴ **“axali Taoba”** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 78, 2006.

²⁰⁵ **“axali Taoba”** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 156, 2006.

²⁰⁶ Դատապարտելով Մ. Սահակաշվիլու թրթամետ քաղաքականությունը, մեկ օր ամառ (2007թ.-ի փետրվարի 11-ին) Թիֆլիսի՝ թուրքական «TAV Airports Holding» ընկերության կողմից գնված ու վերազինված օդանավակայանի բացումը որակելով որպես Թուրքիայի զավթողական քաղաքականության շրթայի մի օղակ՝ քաղաքագետ Գ. Ուձիլաուրին փաստում է, Կրաստանի իշխանությունները պետք է բարձրացնեն «երկրի գինը», այնպես կառուցվող Կարս-Ախալքալաք-Բաթու երկաթուղին և թուրքական մեծացող ազդեցությունները հնարավոր է Կրաստանը վերածեն Գյուրջիստանի (Կրաստանի՝ Թուրքիայի տիրապետության տակ ընկած հատվածը ժամանակին կոչվել է Գյուրջիստանի վիլայեթ): Հոդվածագիրն այն կարծիքին է, որ մինչև երկաթուղու գործելը (տվյալ շրջանում այն ենթադրվում էր շահագործել 2010թ.-ին) Թիֆլիսը պետք է հոգ տանի Ջավախքում վրացամետ իրավիճակ ստեղծելու համար, տեղի հայերին թուրք-վարացական-ադրբեջանական նախագծերում ներգրավելու հարցերը կարգավորելու համար, չնայած, որ, ըստ հեղինակի, «Ախալքալաքի հայ անջատողականները սպառնում են՝ թույլ չտալ այդ նախագծի իրագործումը» (**“axali Taoba”** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 41, 2007).

❖ *Ռուսաստանի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* վրացական հանրային ընկալման մեջ գերակշռողն այն է, որ այդ երկիրը զավթել է ոչ միայն Վրացական ԽՍՀ-ի կազմում գտնված Աբխազիայի ԻԽՍՀ-ն ու Հարավային Օսեթիայի ԻՄ-ը, այլև Աբխազիային սահմանակից ՌԴ Սոչիի շրջանները (վրացական շրջանակներում այն անվանում են Ջիբեթի): Ըստ վրացական տեսակետի՝ անկախության տարիներին (1918–1920թթ.) քաղաքացիական պատերազմների մեջ գտնվող ռուսական ուժերը՝ կարմիրներն ու սպիտակները, միակամորեն զավթել են Սոչիի մարզը (ըստ վրացական հրապարակումների՝ երկրի տարածքը մինչ այդ կազմել է 91 հազ. 110 կմ²)²⁰⁷, ինչի արդյունքում 1920թ.-ին այն վերջնականորեն հաստատվեց որպես Ռուսաստանի մաս և Վրաստանի (Աբխազիայի) հետ Ռուսաստանի սահմանն անցավ Փսոու գետով (գետն այսօր հանդիսանում է ՌԴ-Աբխազիա սահմանագիծը)²⁰⁸:

Այս համատեքստում Ռուսաստանի ցանկացած գործողություն Վրաստանում ընկալվում է որպես Վրաստանի մնացած մարզերը, այդ թվում՝ Ջավախքը անջատելուն ուղղված քայլ:

❖ *Թուրքիայի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* վրացական հանրային ընկալմամբ՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կազմի մեջ մտնող հյուսիսարևելյան, այն է՝ ծովափնյա Օրդու, Գիրեսուն, Ռիզեի, Տրապիզոնի, Արդվինի մարզերի, ինչպես նաև Արդահանի մարզի, Կարսի մարզի արևմտյան, Երզրումի մարզի հյուսիսային և Ադրըի մարզի հյուսիսարևելյան (Ալաշկերտի շրջան) շրջանների հենքի վրա պետք է ձևավորվի լազական-մեսիական ինքնավարություն: Նշված տարածքները՝ պատմամշակութային հուշարձաններով հանդերձ, վրաց հասարակական-քաղաքական շրջանակները համարում են վրացական, իսկ լազերն ու մեսիերը՝ քարթվելական ժողովուրդներ²⁰⁹: Խնդրո առարկա ժամանակաշրջանի վրացական մամուլում դրվատանքով է խոսվում Ռեջեփ Թայիփ Երդողանի մասին ոչ միայն այն պատճառով, որ Վրաստանում Մ. Սահակաշվիլու միջոցով իր նախագահության շուրջ 10 տարիներին (2004–2013թթ., որը գրեթե համընկնում է Ռ. Երդողանի վարչապետության շրջանի հետ) իրականացվել է թրքամետ քարոզչություն, այլև այն պատճառով, որ Ռ. Երդողանն ազգությամբ լազ է, ծնունդով՝ սևծովյան առափնյա տարածքներից: Դժվար է ասել՝ թուրքական կողմի դրդմամբ, թե՞ ուղղակի էթնիկ հանգամանքներից ելնելով, այդուհանդերձ, վրացական մամուլը 2006թ.-ի ամռանը հրապարակեց Թուրքիայում գործող լազական մշակույթի և լեզվի պահպանության «Լազեբուրա» միության նախագահ Մուստաֆա Գիբարոլուի հայտարարությունը, որով նա ռուս-վրացական հարաբերությունների լարվածության խորացման տվյալ ժամանակաշրջանում դատապարտում էր Ռուսաստանի քայլերը և զորակցություն հայտնում Վրաստանին²¹⁰:

Այդպիսով Վրաստանի՝ Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջները և նրա հյուսիսարևելյան մի շարք մարզերում առկա քաղկեդոնական մշակույթի արգասիք հանդիսացող պատմաճարտարապետական հուշարձանների հանդեպ պահանջատեր

²⁰⁷ **“saqarTvelos sarkmeli”** («Սաքարթվելոս սարկմելի») («Վրաստանի պատուհանը (օղանցքը)»), N 4, 2001. Պ.գ.թ. Բեժան Խորավան ջիբերին համարում է հնագույն վրացական ցեղերից մեկը և իր հարցազոյցներում խոսում վերջիններիս մասին հնագույն հիշատակությունների, բնակեցրած երբեմնի տարածքների և Ջիբեթիի (Սոչիի մարզի)՝ վրացապատկան լինելու հարցերի մասին (տե՛ս **“jorjian Taimsi”**(«Ջորջիան թայմս»), N 32, 2004).

²⁰⁸ **“basta”** («Բաստա» (բառացի՝ «Հերիք է»)), N 196, 2003.Հեղինակը, փաստելով 1918–1920թթ.-ին՝ Ջիբեթիի (Սոչիի շրջանների), իսկ այնուհետև Աբխազիայի և Հարավային Օսեթիայի կորուստը, մեղադրում է երկրի ղեկավարությանը (Էդ. Շևարդնանձեին) «պրոկոմունիստական» և «պրոհարևանական» քաղաքականության համար՝ որպես պոտենցիալ վտանգ մատնանշելով «զլուի բարձրացրած Ջավախեթիի հայությանը»:

²⁰⁹ **“jorjian Taimsi”**(«Ջորջիան թայմս»), N 42, 2004.

²¹⁰ **“rezonansi”** («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 206, 2006.

կեցվածքը, գումարած Նշալ հուշարձանների շուրջ ընթացող թուրք-վրացական բանակցությունները, լքորեն ազդում են Վրաստանի իշխանությունների՝ Չավախքի հանդեպ վարվող քաղաքականության վրա: Այստեղ պետք է հաշվի առնել նաև, որ Նշալ հարցի շուրջ թուրք-վրացական բանակցություններում ձեռք բերված յուրաքանչյուր պայմանավորվածություն, փոխզիջում կամ զիջում անմիջականորեն բերում է Վրաստանում թուրքական ազդեցության այս կամ այն կերպ դրսևորմանը, ինչն էլ իր հերթին շղթայաբար ազդում է Վրաստանի՝ Չավախքի հանդեպ վարվող քաղաքականության վրա²¹¹:

❖ *ՀՀ-ի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* վրացական հանրային ընկալմամբ՝ ներկայիս ՀՀ Լոռու մարզի մեծագույն հատվածը՝ հիմնականում Բագումի լեռնաշղթայից հյուսիս, որը 1919-1921թթ.-ին իրերի բերմամբ հայտնի էր որպես «Լոռու չեզոք գոտի» անվամբ (իր ժամանակին ներառել է Վորոնցովկայի (Կալինինո, Տաշիր), Ուզունլարի (Օծուն) և Ալավերդու տեղամասերը՝ համապատասխան գյուղախմբերով հանդերձ), համարվում է վրացապատկան տարածք: Վրացական և՛ պատմագիտական, և՛ հասարակական շրջանակներում մշտապես ցավով է խոսվում 1921թ.-ի իրադարձությունների մասին²¹², երբ Խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողովում Ի. Ստալինի մասնակցությամբ Թիֆլիսում հուլիսի 2-7-ը գումարված ՌԿ(Բ)Կ Կոմբյուրոյի պլենումը հուլիսի 7-ի նիստում որոշեց «Լոռու չեզոք գոտին» միացնել Հայկական ԽՍՀ-ին²¹³, իսկ նույն թվականի նոյեմբերի 6-ին կրկին Թիֆլիսում Հայաստանի Ժողովախորհի նախագահ Ա. Մյասնիկյանի և Վրաստանի Հեղկոմի նախագահ Բուդու Մոլիվանու միջև կնքվեց հայ-վրացական սահմանի մասին համաձայնագիրը²¹⁴ (ՀՀ-Վրաստան ներկայիս սահմանագծումը, որքան էլ իրավունքի տեսակետից մերժելի է, կատարվում է հենց այս պայմանագրով գծված սահմանի հենքի վրա): Այդ պատճառով է նաև, որ վրացական միջավայրում Ի. Ստալինը ունի ծայրահեղ բացասական ընկալում, իսկ որոշ դեպքերում նաև ազգային դավաճանի կերպար է: Բնականաբար, վրացական հանրային ընկալմամբ՝ վրացապատկան են նաև Լոռու մարզի մի շարք քաղկեդոնիկ տաճարներ:

ՀՀ Լոռու մարզի հյուսիսային մի քանի շրջանների հանդեպ պահանջատիրական կեցվածքը, այն է՝ «Լոռու կորստի ցավը», լքորեն ազդում է Վրաստանի՝ Չավախքի հանդեպ վարվող պետական քաղաքականության վրա: Իր հերթին ցանկացած քայլ, որն ուղղված է ջավախահայության ազգային, մշակութային և կամ այլևայլ իրավունքների արձարծմանը, միանգամից ստիպում է հիշելու շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցածը, այն է՝ Լոռու կորուստը: Այդ ամենի մեջ տեսնելով ինքնորոշվելու կամ «Լոռվա սցենարի» կիրառման, այն է՝ ՀՀ-ին միանալու վտանգ, Վրաստանն ամեն գնով ոչնչացնում է ջավախահայության ազգային գիտակցությունն ու մշակութային դիմագիծը:

❖ *Ադրբեջանի հետ հարաբերություններում առկա հողային պահանջներ.* բացի վրաց-ադրբեջանական հարաբերությունների ամենացավոտ հարցերից մեկից՝ Վրաստան-Ադրբեջան ներկայիս սահմանագծի վրա գտնվող Դավիթ Գարեջիի ժայռափոր վանական համալիրի պատկանելության շուրջ ծանր, իսկ երբեմն-երբեմն՝

²¹¹ **Վարդանյան Թ.**, Թուրք-վրացական «մշակութային» երկխոսության քաղաքական ներթափանցումը, 09.06.2011 թ. (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5835):

²¹² **“basta”** («Բաստա» (բառացի՝ «Հերիք է»)), N 196, 2003.

²¹³ **Մելքոնյան Ա.**, Չավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին բառորդին, Ե., 2003, էջ 337:

²¹⁴ **Մելքոնյան Ա.**, Չավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին բառորդին, Ե., 2003, էջ 344:

բախումներով ուղեկցվող վեճի²¹⁵, Մեծ Կովկասի հարավային փեշեղի երկայնքով ձգվող, Ադրբեջանի՝ աշխարհագրորեն Վրաստանի և ՌԴ-ի (Դաղստան) միջև գտնվող Բալականի (մինչև 1991թ.-ը Բելոկանի), Չաբաթալայի և Կախի շրջանները վրացական հանրային գիտակցության մեջ համարվում են վրացապատկան տարածքներ և վաղ թե ուշ ենթակա են վերադարձման Վրաստանին: Այդ երեք շրջաններում ապրող ինգիլյուների (քարթվելական մակրոթեթնոսին պատկանող վրացախոս (ինգիլյուական բարբառ) ժողովուրդ) անունով վրացական միջավայրում մարզը կոչվում է Սաինգիլո: Վրացական հասարակական-քաղաքական և պատմագիտական շրջանակները, փաստելով, որ Սաինգիլոն Խորհրդային Ադրբեջանին է բռնակցվել 1921թ.-ի հուլիսի 5-ին (երբ «Վրաստանի ԽՍՀ-ը հրաժարվեց Չաբաթալայի օկրուգի նկատմամբ ունեցած հավակնություններից»²¹⁶), պահանջում են, որ Վրաստանը պաշտոնապես պահանջի Ադրբեջանից՝ Սաինգիլոյին (սախկին Չաբաթալայի օկրուգին) մշակութային-վարչական ինքնավարություն²¹⁷:

Այսպիսով՝ Սաինգիլոյի խնդրի քննարկումն իրականացվում է «խորհրդային իշխանությունների կողմից Վրաստանի տարածքների բռնագավթման», այն է՝ «երբեմնի մեծ Վրաստանի թզված հերթական փուլի» համատեքստում: Նշված իրողությունն անմիջականորեն ազդում է վրացական հանրային գիտակցության վրա՝ ստիպելով երկրի տարածքում բնակվող բնիկ ժողովուրդների կամ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված ցանկացած քայլ դիտարկել որպես «Վրաստանի հողերի հանդեպ հերթական ոտնձգություն» կամ «Վրաստանի դեմ ուղղված նեոբոլշևիկյան քաղաքականություն»:

❖ Արտերկրում (ոչ հարևան երկրներում) երբեմն բնակված կամ այժմ ապրող քարթվելական ժողովուրդների խնդիրներ. արտերկրում (ոչ հարևան երկրներում) ապրող ոչ այնքան մեծաթիվ վրացական համայնքների խնդիրների շուրջ քննարկումներն ուղիղ կերպով կապված են Վրաստանում ապրող ոչ վրացի ազգությունների խնդիրների և իրավունքների արժարժման հետ: Ըստ այդմ, Չավախքի հիմնահարցի շուրջ քննարկումները վրացական սփյուռքի առջև ծառայած խնդիրների և՛ պատճառ են, և՛ հետևանք: Փաստենք նաև, Թուրքիայից ու Ադրբեջանից հետո պայմանական երրորդ երկիրը, որտեղ ապրող վրացական համայնքի մասին ակտիվորեն քննարկվում է վրացական մամուլում, Իրանն է: Վրացական հանրային շրջանակներում տիրապետող է հետևյալ տեսակետը. 16-17-րդ դարերում Արևելյան Վրաստանից Պարսկաստան են

²¹⁵ **Սարգսյան Վ.**, Դավիթ Գարեջիի խնդրի լուծման բանալին Արցախում է, 17.07.2019 թ., (<https://www.yerkir.am/news/view/180020.html>).

²¹⁶ **“jorjian Taimsi”**, («Ջորջիան թայմս»), N 43, 2004.

²¹⁷ **“jorjianTaimsi”**, («Ջորջիան թայմս»), N 42, 2004. Պատմաբան, իր բազմաթիվ հրապարակումներում ոչ հայանպաստ դիրքորոշումներով հայտնի Գիա Խևեյին «Ջորջիան թայմսի» էջերում ծավալուն անդրադարձ է կատարում վրաց-ադրբեջանական բարեկամական հարաբերություններին՝ մանրակրկիտ կերպով քննելով Սաինգիլոյի վերաբերող կնճռոտ հարցերը: Կատարելով պատմական էքսկուրս և Վրաստանից տարածքներ բռնագավթելու մեջ մեղադրելով հարևաններին, իսկ Սաինգիլոյի մարզը Ադրբեջանին նվիրելու համար քարկոծելով վրաց կոմունիստներին՝ հողվածագիրը փաստում է, որ Սաինգիլոյի ինքնավարության պահանջը Ադրբեջանի դեմ չի ուղղված, այն նաև ապաքաղաքական է և ունի բարոյական, մարդասիրական նպատակներ: Ըստ Գ. Խևեյի՝ Սաինգիլոյին ինքնավարության տրամադրմամբ կշտկվեն վրացի, ադրբեջանցի և ռուս բոլշևիկների դավաճանական քայլերը, դրա փոխարեն Վրաստանը կարող է Ադրբեջանին օժանդակել միջազգային ասպարեզում, այդ թվում՝ Իրանում ապրող միլիոնավոր ադրբեջանցիների իրավունքների համար պայքարում: Հողվածում ինգիլյուների ազգային իրավունքների ոտնահարման մասին բազմաթիվ հիշատակումների և այդ առթիվ արտահայտված դժգոհությունների կողքին հեղինակը խոսել է նաև վրաց-ադրբեջանական ընդհանուր շահերի, Վրաստանում ապրող ադրբեջանցիների հանդեպ պետական բարյացակամ վերաբերմունքի և այլնի մասին՝ ձգտելով այդ ամենով շղարշել Ադրբեջանին ներկայացված հավակնոտ պահանջները:

բռնագաղթեցվել շուրջ 75.000 վրացիներ, նրանց սերունդները գերակշիռ մասով ապրում են Սպահանին հարակից Ֆերեյդանի (պատմական Փերիայի շրջան) շրջանում, այժմ կազմում են մի քանի հարյուր հազար, և Պարսկաստանի իշխանությունները հարկ է, որ վերջիններիս տրամադրեն լայն մշակութային ինքնավարություն, ստեղծեն ազգային դպրոցներ, ֆուլկլորային խմբեր, թատրոն, ռադիո, երկրի խորհրդարանում պետք է լինեն ազգությամբ վրացի պատգամավորներ և այլն²¹⁸:

* * *

Ամփոփեցինք Չավախբի հիմնահարցի վրացական ընկալումների վրա ազդող **ներքին ու արտաքին գործոնները**: Ստորև ներկայացնենք այդ ընկալումների արգասիք հանդիսացող մի շարք կարևոր հրապարակումներ, որոնցում արտացոլված են վրաց հասարակական-քաղաքական, քաղաքագիտական, որոշ չափով նաև գիտական-ակադեմիական ոլորտների ներկայացուցիչների մտքերը, կարծիքներն ու տեսակետները:

Չավախբի հիմնահարցի վերաբերյալ վրաց պետական ու հասարակական-քաղաքական մտքի՝ շուրջ տասնամյա ժամանակահատվածի (1999-2009թթ.) ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի պատկերացումներ կազմելու նաև վրաց աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների կողմից այդ տարածաշրջանի հանդեպ վարվող քաղաքականության, այդպիսով նաև ջավախահայության առջև ծառայած մարտահրավերների մասին:

Ելույթերը ներկայացնում ենք ըստ հրապարակումների ժամանակագրության:

«Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի» տնօրեն, քաղաքագետ Գիա Նոդիան, խոսելով ռուս-վրացական հարաբերությունների և տարածաշրջանային զարգացումների, Զյուսիսային կովկասում էթնիկ տեղաշարժերի, ռուս-չեչենական պատերազմի (տվյալ շրջանում՝ 1999 թ. Նոյեմբեր-դեկտեմբերին, սկսվել և ընթանում էր Երկրորդ չեչենական պատերազմը)²¹⁹

²¹⁸ “jorjian Taimsi”, («Ձորջիան թայմս»), N 43, 2004. Հետաքրքրական է, որ վրացական կողմի թվային տվյալները և Իրանում ապրող վրացիների մասին մի շարք բնութագրումներ չեն համընկնում իրանական կողմի ներկայացրած տվյալների հետ: Այսպես, ըստ այդ տեղեկությունների՝ Իրանում ապրող ծագումով վրացիների թիվը կազմում է մի քանի հարյուր հազար, այլ 30.000-40.000, որոնք ապրում են Կասպից ծովի ավազանում, Սպահանին հարակից Ֆերեյդանի(Փերիայի) շրջանում և այլուր, հարյուր տոկոսով մուսուլման են և հիմնականում ծուլվել են պարսիկներին: Նրանց շուրջ 20.000-ն իր արմատների մասին խորությամբ տեղյակ չէ:

Ըստ պարսկական տվյալների՝ որոշ գյուղերի ու ավանների (հիմնականում Ֆերեյդանում) բնակչության շրջանում գիտեն իրենց վրացական արմատների մասին, նրանց փոքր մասը գիտի նաև վրացական այբուբենը, իսկ խոսակցականում կարելի է զգալ վրացական շեշտադրություն կամ առոգանություն: Այդ բնակավայրերի բնակչության վրացական ծագման մասին է հիշեցնում նաև թխվող հացի վրա խաչ քաշելու սովորույթը, ինչպես նաև որոշ խանութների վրա վրացերեն ցուցատախտակները:

Այդպիսով՝ ըստ իրանական տեսակետի՝ Իրանում ապրող ծագումով վրացիները, ի տարբերություն հայերի և այլ ժողովուրդների, կրոնով միաձուլվելով պարսկական միջավայրում, մեծամասամբ կորցնելով նաև ազգային գիտակցությունը, լայն առումով երբեք չեն ներկայացրել լեզվական-մշակութային իրավունքների վերաբերյալ ինդիո կամ պահանջ: Ըստ տեղեկությունների՝ այդպիսի պահանջների մասին ներկայումս խոսում են հիմնականում երիտասարդության շրջանում, որը մի քանի տասնյակից չի անցնում: Այդուհանդերձ, արմատներով վրացիների շրջանում նման պահանջների վերաբերյալ ցանկություն կամ մասսայական շարժում դեռևս բացակայում է: Վերջին շրջանում ծագումով վրացիների շրջանում որոշակի ցանկություն կա Կրաստանի քաղաքացիություն ստանալու, որի միջոցով վերջիններս առավել հեշտությամբ են տեղավորվում դեպի Եվրոպա կամ ԱՄՆ:

²¹⁹ Երկրորդ չեչենական պատերազմի «տաք» շրջանն ընդունված է համարել 1999թ.-ի սեպտեմբերից մինչ 2000թ.-ի ապրիլ ընկած հատվածը: Իսկ որոշ տեսակետների համաձայն՝ այն

մասին, Վրաստանում տեղակայված ռուսական ռազմաբազաների դերակատարությանը, դրանց հետագա ճակատագրի և դրանց միջոցով Ռուսաստանի՝ տարածաշրջանային գերիշխող դիրքերի վերաբերյալ քննարկումների տիրույթում հիշատակում է Նաև Չավախբը: Ըստ քաղաքագետի՝ Վրաստանի ղեկավարությունը զսպում է իրավիճակը Չավախբում (որտեղ տեղակայված էր ռուսական խոշոր ռազմաբազաներից մեկը), այդուհանդերձ ժամանակն է, որ հայտարարվի ՌԴ ռազմակայանների՝ Վրաստանում գտնվելու անթույլատրելիության մասին, և այդ պահանջը, ըստ Գ. Նոդիայի, պետք է դրվի Ռուսաստանի հետ Նորմալ հարաբերությունների կառուցման հիմքում: «Դրանով կվերանան Նաև այդ բազաները պահպանելու նպատակով Վրաստանի դեմ ուղղված ռուսական շանտաժները»,- ավելացնում է քաղաքագետը²²⁰: Վրաստանում ռուսական ռազմաբազաների առկայությունը խստորեն քննադատող համանման հարցազրույցի շրջանակներում Չավախբի խնդիրն է քննարկել Վրաստանի առաջին նախագահ (1991-1992 թթ.) Չվիադ Գամսախուրդիայի այրին՝ տվյալ շրջանում Վրաստանի քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների կլոր սեղանի²²¹ խոսնակ Մանանա Արչվաձե-Գամսախուրդիան: 2000թ.-ի հունիսի 20-ին «Ռուսթավի-2» հեռուստատեսության «Գիշերային կուրիեր» հաղորդմանը տված հարցազրույցում նախկին նախագահի այրին, խոսելով Աբխազիայի և Չարավային Օսեթիայի կորստյան մասին, անդրադառնում է նաև «Ախալքալաքի հարցին» (**“axalqalaqis kiTxva”**)՝ հայտնելով, որ ըստ հրապարակումների՝ հայերը մտադրվել են ստեղծել ինքնավարություն²²²: Առաջին նախագահի տիկինը ծանր քննադատության է արժանացնում Վրաստանի ղեկավարությանը՝ ռուսական ռազմաբազաները երկրում թողնելու համար, ինչը, ըստ նրա, կնպաստի Ախալքալաքի հայերի դիրքորոշման ամրապնդմանը: Մ. Արչվաձե-Գամսախուրդիան կրկին բարձրաձայնում է վրացական միջավայրում կարծրացած այն տեսակետը, թե հայերը հյուր են Վրաստանում և որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից զուրկ: Նա նշել է. «Ես չեմ պայքարում հայերի դեմ, բայց նրանք թող լավ լինեն իրենց հայրենի տարածքում, այլ ոչ Վրաստանում: Վրաստանի ոչ մի ներկայացուցիչ չայաստանի տարածքում չի պահանջում ինքնավարություն»²²³:

Կրկին Չավախբում բռնկվող հնարավոր անջատողականության խնդիրն է քննարկել Վրաստանի ազգային ակադեմիայի իսկական անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Միքելաձեն: Հրապարկած ծավալուն հոդվածում ՎԳԱԱ ներկայացուցիչը նշյալ խնդիրը քննարկել է, սակայն ոչ թե հայության պահանջների, այլ թուրք-մեսխեթցիների՝

շարունակվել է շուրջ 10 տարի՝ 1999-2009թթ.: Տե՛ս **20 տարի անց. կարևորը՝ Երկրորդ չեչենական պատերազմի մասին**, 23.10.2019 թ. (<https://www.yerkir.am/news/view/185172.html>):

²²⁰ **“kvisis palitra”**(«Կվիռիս պալիտոռա» («Շաբաթվա ներկայանակ»)), N 48, 1999.

²²¹ Շուրջ 7 միություններից և հասարակական – քաղաքական ուժերից բաղկացած «Կլոր սեղան – Ազատ Վրաստան» (**“mrgvali magida – Tavisufali saqarTvelo”**) քաղաքական բլոկը ստեղծվել է 1990թ.-ի ապրիլին Չ. Գամսախուրդիայի և վերջինիս կողմնակիցների գլխավորությամբ: Նորաստեղծ քաղաքական ուժը մասնակցեց 1990թ.-ի հոկտեմբերի 28-ին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններին՝ ստանալով ձայների 53,94 %-ը: Նոյեմբերի 14-ին «Կլոր սեղան – ազատ Վրաստան» քաղաքական ուժի առաջնորդ Չ. Գամսախուրդիան ընտրվեց Նորընտիր ԳԽ նախագահ, իսկ 1991թ.-ի մայիսի 26-ին՝ Վրաստանիառաջին նախագահ (ս.մ. **Скаков А.**, Внутриполитическая ситуация в Грузии, Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, т. 2, Москва, 2002, С. 262): 1990 թ. ընթացքում շուրջ երկու անգամ (ապրիլի 20-ին և հոկտեմբերի 20-ին) «Կլոր սեղան – ազատ Վրաստան» բլոկի ներկայացուցիչների հետ հանդիպել են «Չավախբ» ժողովրդական շարժման ներկայացուցիչները, որտեղ քննարկվել են և՛ քաղաքական, և՛ սոցիալ-տնտեսական ոլորտներին առնչվող հարցեր (տե՛ս **Սարգսյան Վ.**, Սամցխե-Չավախբ-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հողվույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, 2006, էջ 72-73):

²²² **“iberia.speqtri”**(«Իբերիա. սպեկտրի» («Իբերիա. սպեկտր»)), N 327, 2000.

²²³ **“iberia.speqtri”**(«Իբերիա. սպեկտրի» («Իբերիա. սպեկտր»)), N 327, 2000.

Վրաստան վերադարձով պայմանավորված հնարավոր զարգացումների համատեքստում: Անդրադառնալով տվյալ հանրույթի ձևավորման, անվան ծագման, նրանց բռնագաղթման, թվաքանակի, գիտակցության, Եվրոպայի խորհրդի կողմից Վրաստանին առաջադրված պահանջների և այլնի մասին՝ Ա. Միքելաձեն դեմ է արտահայտվում մեսիսերին թուրք անվանելուն:

Ըստ նրա՝ մեսիսերը վրացական ցեղեր են, որոնք թուրքական տիրապետության տակ ընդունել են մուսուլմանություն, ձեռք բերել թուրքական ազգանուններ, ինքնագիտակցություն և այլն: Բերելով օրինակ, ըստ որի՝ 1992թ.-ին Վրաստանի առանձին շրջաններում վերաբնակեցված շուրջ 700 թուրք-մեսիսեցիներից ընդամենը 50 հոգի է խոստովանել իր վրացական ծագման մասին, ընդունել վրացերենը՝ որպես հարազատ լեզու և վերականգնել հեռավոր նախնիների վրացական ազգանունները²²⁴, Ա. Միքելաձեն առաջարկում է, որ պետք է նախ և առաջ պարզել, թե երեք խորհրդային հանրապետություններից՝ Ղազախստանից, Վրաստանից ու Ադրբեջանից որքան թվով մահմեդականներ են արտաքսվել Միջին Ասիայի երկրներ, որքան թվով մարդիկ են ճանապարհներին մահացել, հետագայում որքան է աճել նրանց թիվը և այլն²²⁵: Միայն այդ ամենից հետո, ըստ վրացի գիտնականի, կարելի է ձեռնարկել վերադարձի միջոցառումներ և Վրաստան վերադարձնել Սամցխե-Ջավախքից բռնագաղթված մահմեդականների այն շերտերին, որոնք չեն ժխտում իրենց վրացական ծագումը և պատրաստ են վերականգնել վրացական ազգանունները: Այլապես, ելնելով Վրաստանի՝ թույլ և սոցիալ-տնտեսական խնդիրներով հարուստ պետություն լինելու իրողությունից՝ դրսի ուժերի միջամտության դեպքում կարող է խախտվել Վրաստանի տարածքային ամբողջականությունն այնպես, ինչպես տեղի ունեցավ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի դեպքում. փաստում է Ա. Միքելաձեն՝ ավելացնելով, որ ամենից առաջ պետք է վերադարձվեն իրենց բնակավայրերը անջատված այդ տարածքներից դուրս եկած փախստականները, և նոր միայն անդրադառնալ մահմեդականների վերադարձի խնդրին²²⁶:

Վրաստանի նախագահ Էդ. Շևարդնաձեի և խորհրդարանի խոսնակ Չ. Ժվանիայի՝ 2000թ.-ի նախընտրական շրջանում²²⁷ Ջավախք կատարած այցելություններին, ջավախահայության ներկայացրած պահանջներին և Ջավախքում ստեղծված իրադրությանն է անդրադարձել «Ռեզոնանս» թերթի հոդվածագիր-վերլուծաբան Գ. Զալախաձեն: Ախալքալաքում հավաքված շուրջ 200 անձինք Էդ. Շևարդնաձեից պահանջել են Ջավախքին շնորհել ինքնավարություն, ժամանակին վճարել թոշակներն ու աշխատավարձերը, թեթևացնել ստեղծված սոցիալական ծանր վիճակը և այլն: Ջավախահայությունը դեմ է արտահայտվել նաև Ախալքալաքից ռուսական ռազմաքազանների դուրս բերմանը: Հոդվածագիրը պնդում է, որ, ջավախահայերը, ելնելով Վրաստանի ֆինանսական և սոցիալ տնտեսական անկայուն վիճակից, թերահավատ են, որ ռուսական ռազմաքազայի փոխարեն տեղակայվելիք վրացական ռազմակայանում իրենք կշարունակեն աշխատել: Բացի դրանից, ըստ հրապարակման՝ ռուսական բազայում ծառայողները Վրաստանի ու վրացական բանակի հանդեպ չափազանց վատ են տրամադրված, ուստի ջավախահայության՝ վրացական բանակի հետ հույսեր կապելն ինքնախաբեություն է²²⁸: Հոդվածագիրը Ջավախքում տեղի ունեցող բոլոր խմորումները, պահանջների ձևավորումն ու երկրի ղեկավարության

²²⁴ **“dilisgazeTi”** («Դիլիս գազեթի») («Առավոտյան թերթ»), N 187, 2000.

²²⁵ **“dilisgazeTi”** («Դիլիս գազեթի») («Առավոտյան թերթ»), N 188, 2000.

²²⁶ **“dilisgazeTi”** («Դիլիս գազեթի») («Առավոտյան թերթ»), N 188, 2000.

²²⁷ 2000 թ. ապրիլի 9-ին Էդ. Շևարդնաձեն վերընտրվեց Վրաստանի նախագահի պաշտոնում:

²²⁸ **“rezonansi”** («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 92, 2005.

ամռան դրանցով հանդես գալը կապում է նորաստեղծ «Վիրք» կուսակցության²²⁹ անջատողական գործողությունների հետ: Կրկին տուրք տալով վրացական հանրային շրջանակներում կարծրացած մտեցումներին՝ հողվածագիրը ջավախահայության օրինաչափ դժգոհություններն ու պահանջները, որոնք բարձրացվել են նաև «Վիրք» կուսակցության ներկայացուցիչների կողմից, կապում է ինչպես Մոսկվայից, այնպես էլ Երևանից հրահրվող սադրանքների հետ: Ըստ հողվածագրի՝ «Վիրքը» մտել է տարածաշրջանային բարդ խաղերի մեջ և սերտ կապերի մեջ է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության հետ²³⁰:

Կրկին Էդ. Շևարդնաձեի՝ Ջավախք կատարած նախընտրական նույն այցելությանն է անդրադառնում «Մերիդիանի-44» թերթի հրապարակագիր Ս. Չանդուկեյին և փաստում, որ վերոհիշյալ բողոք-հանրահավաքը կազմակերպել են «Վիրք» չգրանցված կուսակցությունն ու «Ջավախք» կազմակերպությունը²³¹: Վերստին անդրադառնալով Ջավախքում ստեղծված լարված իրադրությանը, ռուսական ռազմաբազաների դուրս բերման շուրջ ռուս-վրացական բանակցություններին և այլ հարցերի՝ հեղինակը փաստում է, որ Վրաստանի արդարադատության նախարարությունը «Վիրք» կուսակցության գրանցման հարցում պետք է ձեռնպահ մնա: «Գրանցել «Վիրքին»՝ նշանակում է, Վրաստանում հիմնել ազգային հատկանիշներով քաղաքական առաջին կազմակերպությունը կամ ուղղակի «հայկական կուսակցությունը», որը կմասնակցի ընտրություններին և կհաղթահարի 7 տոկոսանոց բարիերը: Դրանից բացի, այդ կուսակցությունը լրիվությամբ ձեռք կբերի ղեկավարություն Ախալքալաքում և Նինոծմինդայում՝ ստեղծելով «Էթնիկ ընդդիմություն» նաև Ախալքալաքի և Ադիգենի շրջաններում: Բացի այդ, Վրաստանի Սահմանադրության համաձայն՝ արգելվում է ստեղծել էթնիկական հատկանիշներով կուսակցություն»²³²: Չնայած վրացի հեղինակի այդ պնդումներին՝ վերևում նշեցինք արդեն, որ «Վիրքը» ընույթով համավրաստանյան էր,

²²⁹ «Վիրք» կուսակցությունը հիմնադրվել է 1999թ.-ի հունվարի 31-ին Ջավախքում (տե՛ս «Հզոր Հայրենիք», թիվ 4, 4-10 փետրվար, 1999): Թեև վերջինս ծնունդ էր առել Ջավախքում, սակայն իր բնույթով համավրաստանյան էր, և վերջինիս անդամ կարող էր դառնալ ընտրության իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից, ով ընդունում էր կուսակցության կանոնադրությունը, մասնակցում նրա աշխատանքներին, վճարում անդամավճար և չէր պատկանում որևէ այլ կուսակցության (см. Устав - всегрузинской партии «Вирк», пункт 4, 04.02.1999). «Վիրք» կուսակցությունը ազգային կրոնական կամ տեղական սկզբունքներով կուսակցությունների ստեղծման անթույլատրելիության պատճառաբանությամբ մինչև օրս գրանցված չէ Վրաստանի արդարադատության նախարարությունում: Իրական պատճառը թերևս այդ կուսակցության՝ Ջավախքի հայության շրջանում համամասնական ընտրաձևով անհամեմատ շատ ծայրեր հավաքելու և Վրաստանի խորհրդարանում լրացուցիչ հայազգի պատգամավորներ ունենալու հանդեպ վրացական իշխանությունների մտավախությունն է:

²³⁰ **“rezonansi”** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 92, 2005.

²³¹ 1988թ.-ի փետրվարի վերջին՝ Ղարաբաղյան շարժման սկսվելուց մեկ շաբաթ անց, Ախալքալաքում հիմնադրվեց «Ջավախք» կոմիտեն: Այն հետագայում վերածվելու էր «Ջավախք» ժողովրդական շարժման: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ ողջ տարածքում իրականացվող «վերակառուցման» քաղաքականության հետ կապված՝ շարժման սկզբնական փուլում (մինչև 1990թ.-ի հունվարի 27-ի առաջին կոնֆերանսը) այն կոչվել է «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անունով և գործել որպես կամավոր ՀԿ: 1990թ.-ի հունվարի 27-ին տեղի ունեցավ շարժման առաջին կոնֆերանսը: Կոնֆերանսում մասնակիցների առաջարկների հիման վրա փոխվում է նաև կազմակերպության անվանումը: Այնուհետև կազմակերպությունը «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անվան փոխարեն կոչվում էր «Ջավախք» ժողովրդական շարժում (տե՛ս **Սարգսյան Վ.**, Միություններն ու կազմակերպությունները Սամցխե-Ջավախք-Ճավախում (1988-2008 թթ.), «21-րդ դար», N 5 (27), Երևան, 2009, էջ 64-65):

²³² **“meridiani-44”** («Մերիդիանի-44» («Մերիդիան-44»)), N 43, 2000.

և վերջինիս անդամ կարող էր դառնալ ընտրության իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի՝ անկախ ազգային պատկանելությունից: Կրացի հեղինակը այս առթիվ նաև մտահոգություն է հայտնում, որ «Կիրքի» գրանցման պարագայում Զվեմո Զարթի տարածարջանում զուլխ կբարձրացնեն ադրբեջանական շրջանակները, առանձին շրջաններում հույները հանդես կգան նման նախաձեռնություններով և այլն, և այդ ամենը, ըստ վերլուծաբանի, կծառայի Կրաստանի հետագա մասնատմանն ու քայքայմանը:

Էդ. Շևարդնաձեի՝ 2001թ.-ի հոկտեմբերին Երևան կատարած պաշտոնական այցի քննարկման համատեքստում վրացի հրապարակագիր Մ. Խուրցիձեն, քննարկելով ՀՀ-Կրաստան հարաբերությունները, արխագահայությանն ու ջավախահայությանը դիտարկում է որպես Երևանի կողմից Կրաստանի վրա ազդեցություն գործելու լծակներ: Հրապարակագիրը շատ հետաքրքիր և կրկին միակողմանի համեմատություն է ներկայացնում, ըստ որի՝ 1991թ.-ի մարտի 17-ին տեղի ունեցած ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի ժամանակ հայությունը Հայաստանում բոյկոտել է հանրաքվեն, իսկ ահա Աբխազիայում հայերը միացել են արխագներին, հակադրվել Կրաստանին և քվեարկել ԽՍՀՄ պահպանման օգտին²³³: Ավելին, ըստ հողվածագրի՝ հայերը «երկակի ստանդարտներ» են ցուցաբերել. նրանք մարտի 17-ին Հայաստանում բոյկոտել են հանրաքվեն և հանդես եկել երկրի անկախանալու օգտին, իսկ ահա նույն թվականի մարտի 31-ին տեղի ունեցած Կրաստանի անկախության հանրաքվեին Աբխազիայի հայերը հրաժարվել են մասնակցելուց²³⁴: Այստեղ ևս ցավով պետք է փաստել, որ վրացական շրջանակները հաշվի չեն առնում ստեղծված այն կոնֆլիկտային, իսկ դրանից ավելի քան մեկ տարի անց պատերազմական արյունալի իրավիճակը Աբխազիայում, որի պայմաններում արխագահայությունն այլ կերպ չէր կարող գործել: Ցավոք, արխագահայության նման դիրքորոշումներով, իսկ հետագայում նաև պատերազմական գործողություններին մասնակցությամբ պայմանավորված՝ վրացական կարծր մոտեցումները իներցիոն ուժով տարածվել են նաև ջավախահայության վրա, և ամենևին պատահական չէ, որ Մ. Խուրցիձեն արխագահայության մասին քննարկումների համատեքստում, որպես «անվստահելի» շրջանակների, հիշատակում է նաև ջավախահայությանը: Այնինչ այս մոտեցումը ոչ միայն հիմնազուրկ է, այլև ելնելով առկա փաստերից՝ նաև անարդարացի: Մեր գիտական հրապարակումներում ոչ մեկ անգամ ենք անդրադարձել 1991թ.-ի մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման հանրաքվեին և ջավախահայության կողմից վերջինիս հանդեպ ցուցաբերած դիրքորոշումներին: Խոսքը մասնավորապես, վերաբերում է Ջավախքում գործող «Ջավախք» ժողովրդական շարժման և «Փարվանա» կազմակերպության²³⁵ կողմից Ջավախքի ազգաբնակչությանն

²³³ Կրաստանն ի սկզբանե հրաժարվել էր որևիցե ձևով մնալ ԽՍՀՄ կազմում և բոյկոտեց հանրաքվեն: Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը և Հարավօսական Ինքնավար Մարզը ԽՍՀՄ պահպանման հանրաքվեի հարցում չմիացան Կրաստանին և քվեարկեցին ԽՍՀՄ պահպանման օգտին: Նույն սցենարը տեղի ունեցավ նաև Մոլդովայի պարագայում. վերջինիս լարված օջախներից մեկը՝ Մերձդնեստրյան շրջանի աջափնյա անկախ՝ Բենդերյան շրջանը ևս ձայների 98,9 %-ով հանդես եկավ ԽՍՀՄ պահպանման օգտին: Սա այն դեպքում, երբ ինքը՝ Մոլդովան, բոյկոտեց վերոհիշյալ հանրաքվեն: Ըստ որոշ հեղինակների՝ վերջիններս քվեարկեցին ոչ թե ԽՍՀՄ պահպանման, այլ ՌԴ կազմում մնալու օգտին (տե՛ս **Мяло К.**, Россия и последние войны XX века (1989-2000). К истории падения сверхдержавы, Москва, 2002, С. 110, 189).

²³⁴ **“axali meridiani”** («Ախալի մերիդիանի») («Նոր մերիդիան»), N 8, 2001.

²³⁵ «Փարվանա» հասարակական կազմակերպությունը ծնունդ է առել Բոգդանովկայում(այժմ՝ Նինոծմինդա)՝ 1989թ.-ին՝ ազգային ինքնագիտակցության վերածննդի շրջանում, միտինգային թոհուբոհի մեջ: Կազմակերպությունն ակտիվորեն հակադրվեց նախ՝ կոմունիստական, ապա՝ զվիարդական իշխանությունների նկրտումներին: Համագործակցելով «Ջավախք» ժողովրդական շարժման հետ և ստանալով վերջինիս օժանդակությունը՝ «Փարվանա»-ն Բոգդանովկայի շրջանում (Գորելովկայում շուրջ 7 տասնյակ, Եֆրեմովկայում՝ 3

ուղղված կոչին, որով վերջիններս պահանջում էին ժողովրդից՝ չմասնակցել ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991թ.-ի մարտի 17-ի համաժողովրդական հանրաքվեին՝ այն (մասնակցությունը) համարելով սխալ. «...քանզի ԽՍՀՄ-ն այն կայսրությունն է, որի գոյությունն ինքնըստինքյան հակաժողովրդավարական է, վարում է ամբողջատիրական քաղաքականություն, խեղդում ամեն մի ազգային դեմոկրատական շարժում»²³⁶: Ցավոք, վրացական շրջանակներում հայության հանդեպ համընդհանուր տարածում ունեցող «հատուկ» վերաբերմունքի պայմաններում այսպիսի բազմաթիվ փաստերը որևէ քննարկման չեն արժանանում:

Եզրակացություն

Ձավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա խորը և հիմնական ազդեցություն են գործել մի խումբ ներքին ու արտաքին գործոններ: Բացի վրացական միջավայրում հայության հանդեպ ձևավորված «ավանդական», գերակշիռ մասով՝ բացասական վերաբերմունքից, վերհիշյալ ընկալումների վրա խորը հետք են թողնում նաև Կրաստանի բազմթիվ լինելու իրողությունը և, հակառակ դրան, տվյալ երկրում մշտապես կիրառվող մոնոթեևիզացման (միաթեևիկ հանրույթի ձևավորման) քաղաքականության առկայությունը:

Կրաստանի փաստացի տարածքում տեղի ունեցող էթնոժողովրդագրական գործընթացները, որոնք տեղի են ունենում երկրի ինչպես ոչ քարթվելալեզու, այնպես էլ քարթվելական մակրոթեևոսին պատկանող ժողովուրդների շրջանում, այս կամ այն ազդեցությունն են թողնում Ձավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա: Այդ իմաստով պակաս կարևոր չեն նաև թվարկված արտաքին գործոնները, որոնք ուղղակի և անուղղակի ձևով ազդում են ջավախահայության հիմնախնդիրների վերաբերյալ վրացական միջավայրում տեղի ունեցող քննարկումների, ձևավորվող տեսակետների ու եզրահանգումների վրա:

Ձավախքի հիմնահարցի վրացական ընկալումները մատնանշող վրացական տպագիր մամուլի հիմնական հրապարակումները կներկայացվեն մեր աշխատանքի երկրորդ մասում, որում կգետեղվի նաև վերոնշյալ ընկալումների դասակարգման ու համապատասխան եզրահանգումների վերաբերյալ շարադրանքը:

տասնյակ, Օռլովկա, Սպասովկա, Կալինինո գյուղերում՝ մեկական տասնյակ) տներ գնեց կարիքավոր հայ ընտանիքների, Գյումրիի երկրաշարժից տուժածների և այլոց համար: Դա այն ժամանակ էր, երբ «Մ.Կոստավա» հիմնադրամը Նույնպես սկսել էր վերոնշյալ գործընթացը (տներն ազատվում էին ռուս դոկտորների՝ այդ շրջանից արտագաղթելու պատճառով): Ինչպես արտաքին (իշխանական) ճնշումների, այնպես էլ ավելի շատ անդամների միջև առաջացած հակասությունների պատճառով կազմակերպությունը 1990-ական թթ.-ի կեսերից փաստացի դադարեց գոյություն ունենալ: Վերջինիս անդամներից մեկն այդ ընթացքում հիմնեց Ձավախքի քաղաքական կյանքում քիչ թե շատ դերակատարություն ունեցող մեկ այլ կազմակերպություն՝ «Օդան»: «Փարվանա» կազմակերպության կողմից 1991թ.-ին հիմնադրվեց ու հրատարակվեց համանուն թերթ՝ 4 համար: Տե՛ս «Ձավախք», ապրիլ, 1995, N 3 (9), հմմտ.: Բոգդանովկայի շրջան, Տեղեկագիրք, Բոգդանովկա, 1992, էջ 99:

²³⁶ Տե՛ս Կոչի բովանդակությունը (Սարգսյան Վ., Ձավախահայության դիրքորոշումը 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի նկատմամբ (մի փաստաթղթի պատմություն), ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 224-225):

**THE MAIN ISSUE OF JAVAKHK ACCORDING TO THE
PERCEPTIONS OF GEORGIAN SOCIO-POLITICAL THOUGHT
(BASED ON GEORGIAN PRINT MEDIA IN 1999-2009)
(PART 1)**

VAHE SARKISYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of History, Department of Diaspora and History of Armenian Colonies,
Researcher, Ph.D. in Historical Sciences,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to present the question of Javakhk through the materials of the Georgian print media for about ten years (1999-2009) with the perception of Georgian social and political thought. The task of the first part of the article is to systematically look at all the internal and external factors that influenced the Georgian perception of the Javakhk issue.

The text of the study was written in 1999-2009 based on the study of other materials related to this topic, as well as other articles published in Georgian print media.

As a result of the study, it was concluded that a group of internal and external factors had a profound and serious impact on Georgians' perception of the Javakhk issue. The perception and stereotypes formed by these factors largely determine the political direction of the Georgian authorities towards the Armenians of Javakhk.

Key words: *Javakhk, Georgian socio-political thought, Georgian print media, Georgian environment, perception, internal and external factors, political direction, interstate relations.*

**ПРОБЛЕМА ДЖАВАХКА В ОЦЕНКЕ ГРУЗИНСКОЙ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
(ПО МАТЕРИАЛАМ ГРУЗИНСКИХ ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ 1999-
2009 гг.)
(ЧАСТЬ 1)**

ВАЭ САРКИСЯН

*научный сотрудник отдела истории армянских колоний и диаспор института
истории НАН РА, кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является по материалам грузинской прессы за 10-тилетний (с 1999 по 2009) период представить восприятие и оценку Джавахкского вопроса грузинской общественно-политической мыслью.

В первой части статьи ставится задача систематизировать и показать внутренние и внешние факторы, которые повлияли на восприятие грузинской стороной проблем Джавахка.

Содержание исследования основывается на материалах, опубликованных в период с 1999 по 2009 годы в грузинских печатных изданиях, а также на основе сопоставления материалов других, связанных с данной темой, источников.

В результате исследования мы пришли к выводу о том, что ряд внутренних и внешних факторов оказал глубокое и серьезное влияние на восприятие грузинами проблем Джавахка. Сформировавшиеся под влиянием этих факторов стереотипы вызванное ими восприятие проблемы во многом определили политическую направленность, проводимую грузинскими властями в отношении армян Джавахка.

Ключевые слова: *Джавахк, грузинская общественно-политическая мысль, грузинские печатные издания, грузинская среда, восприятие, внутренние и внешние факторы, политическая направленность, межгосударственные отношения.*